

(թիվ 01/11 արձանագրությունից «Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստի)

ք. Երևան, Ռուբինյանց 28

«20» մայիսի 2011թ.

«Ալմաստ» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») նիստին (այսուհետ՝ «Նիստ») մասնակցում էին հետևյալ խորհրդի անդամները՝

- Կարեն Մանուկովը (Խորհրդի նախագահ),
- Մանվել Սահակյանը (Խորհրդի անդամ),
- Օլգա Գասպարյանը (Խորհրդի անդամ),
- Ռուբեն Ներսիսյանը (Խորհրդի անդամ),
- Վարազդատ Ներսիսյանը (Խորհրդի անդամ):

Նիստից բացակայում էր Խորհրդի անդամ Սերգեյ Սկրտչյանը:

Նիստը նախագահում էր Կարեն Մանուկովը:

Օր ա կ ա ր գ

1. Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվության նախնական հաստատման հարցը:
2. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու և օրակարգը հաստատելու հարցը:

Քվեարկության դրված հարցը՝

1. Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվության նախնական հաստատման հարցը:

Քվեարկության արդյունքները՝

Կարեն Մանուկով	-	Կողմ
Մանվել Սահակյան	-	Կողմ
Օլգա Գասպարյան	-	Կողմ
Ռուբեն Ներսիսյան	-	Կողմ
Վարազդատ Ներսիսյան	-	Կողմ

ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱԶԱՅՆ ՈՐՈՇԵՑ.

- Նախնական հաստատել Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվությունը:

Քվեարկության դրված հարցը՝

2. Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու և օրակարգը հաստատելու հարցը:

Քվեարկության արդյունքները՝

Կարեն Մանուկով	-	Կողմ
Մանվել Սահակյան	-	Կողմ
Օլգա Գասպարյան	-	Կողմ
Ռուբեն Ներսիսյան	-	Կողմ
Վարազդատ Ներսիսյան	-	Կողմ


ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱՉԱՅՆ ՈՐՈՇԵՑ.

- 2011թվականի հունիսի 22-ին, ժամը 15:00-ին, «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28» հասցեում հրավիրել Ընկերության տարեկան ընդհանուր ժողով և հաստատել հետևյալ օրակարգով՝
 1. Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:
 2. Ընկերության տնօրենի զեկույցը 2010 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:
 3. Ընկերության 2010թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:
 4. Ընկերության 2010 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:
 5. Ընկերության 2010 թվականի տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի հաշվի, շահույթի և վնասի բաշխման հարցը:
 6. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:
 7. Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:
 8. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:
- «ԲԱՄՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցել ընկերության բաժնետերերին և ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձանց՝ մամուլի միջոցով հրապարակելով տարեկան ժողովի գումարման մասին հայտարարությունը:
- 2011 թվականի հունիսի 15-ի դրությամբ կազմել տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը:
- Հաստատել Ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող հետևյալ տեղեկությունների և նյութերի ցուցակը.
 - ա) Ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը,
 - բ) Ընկերության վերստուգողի եզրակացությունը,
 - գ) Աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
 - դ) Տեղեկություններ Խորհրդի կազմում ընդգրկվելու համար առաջադրվող թեկնածուների մասին,
 - ե) Տեղեկություններ Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրության համար առաջադրվող թեկնածուի մասին,
 - զ) Տեղեկություններ Հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար առաջադրվող թեկնածուների մասին,
 - է) Կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ:
- Ըստ ներկայացված նմուշի՝ հաստատել Ժողովի ընթացքում բաժնետերերին տրամադրվող քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը:

(Արձանագրությունը կազմված է 20.05.2011թ. դրությամբ և ստորագրվել է Կարեն Մանուկովի (Խորհրդի նախագահ), Օլգա Գասպարյանի (Խորհրդի անդամ), Մանվել Մահակյանի (Խորհրդի անդամ), Ռուբեն Ներսիսյանի (Խորհրդի անդամ) և Վարազդատ Ներսիսյանի (Խորհրդի անդամ) կողմից:

Համապատասխանում է քննարկմանը

«ԱԼԱՄՍ» ԲԲԸ
Տնօրեն



Վահրամ Թեպելիկյան